դանի վերայ կանգնած խաչարձանը, վանքի պարսպից դուրս, դէպի արևելք, աղբիւրի սրահի յետևը։ Ենթադրաբար միայն կարող ենք առաջին խաչարձանի Մխիթարին նոյնացնել սրբագրող Մխիթարին, բայց կասկածից վեր է, որ Ս. Սարգիս խաչարձանի արձանագրութեան մէջ յիշուած «Մխիթար Քոբայրեցին», Յակոբ և Մարգարէն նոյն են յիշատակարանի մէջ յիշուած նոյնանուն անձնաւորութիւնների հետ, այսինքն մեր աւետարանի սրբագրողի, գրչի և նկարչի։ Այս հանգամանքը կարևոր արժէք է ստանում մի այլ խնդրի վերջնական լուսաբանութեան համար. յիշատակարաններից պարզ էր, որ նկարիչը կամ ծաղկողը Մարգարէն, բայց անորոշ, թէ ո՞րտեղ էր ապրում և գործում, աւելի ճիշդ ո՞րտեղ է նկարազարդուած մեր աւետարանը, Հաղբատո՞ւմ, թէ Հոռոմոսում, ուր կազմուած է առաջին անգամ ձեռագիրը նոյն վանքի հայր Մխիթարի հրամանով, ուր և հաւանօրէն գրուած կարող է լինել յիշատակարանը։ Աբրահամ կազմող և Մարգարէ նկարիչ միասին են յիշատակուած այդտեղ. որից մակաբերել կարելի է, թէ երկուսն էլ Հոռոմոսումն են յիշատակարանի գրութեան ժամանակ և նոյն վանքի միաբան։ Բայց վերև մէջ բերուած տուեալներով այլ ևս ոչ մի կասկածի տեղիք չէ մնում, թէ ոչ միայն ձեռագիրն է Հաղբատում գրուած, այլ և նկարուած է նոյն տեղում և նոյն ուխտի միաբանի կողմից, ուստի և իրաւամբ Ժ. դարում արևելեան Հայաստանի գրչութեան և մանրանկարչութեան արուեստների գլխաւոր կեդրոններից մէկը պիտի համարել այդ վանքը։

Գ.

Հաղբատի և դրացի Սանահին վանքերի հիմնարկութիւնը վերագրւում է Աշոտ ողորմածի թագուհի Խոսրովանոյշին, հնագոյն աղբիւրն այդ մասին Ասողիկն է(*), Հաղբատի առաջին վանահայր Սիմէոնին համարելով. Սամուէլ Անեցին աւելի որոշ է դնում հիմնարկութեան թուականը. «ի ՆԺԶ թվին շինեցաւ Հաղբատ, և Սանահինն՝ ԺԵ. ամաւ յառաջ քան զՀաղբատ շինեցաւ ի Խոսրովանոյշ թագուհւոյն՝ ի կընոջէ Աշոտոյ Շահնշահի»(**)։ Վարդան 978 թուից առաջ է դնում նրանց ծագումը. «Խոսրովանոյշ շինէ զփառազարդ սուրբ ուխտն Սանահին և զՀաղբատ»(***)։ Սամուէլի թուականը պէտք է համարել հաստատ, որ համապատասխան է այն թուականին, որ տալիս է Սանահնի Սիմէոն գրիչն ըստ Ջալալեանի(****)։ Վանքն սկզբում իբրեւ կրօնաւորանոց, հետզհետէ դառնում է Արևելեան Հայաստանի մտաւոր և հոգևոր նշանաւորագոյն կեդրոններից մէկը՝ նախ Կիւրիկեանների և ապա Զաքարեանների ծաղկեալ շրջանում։

Ըստ արձանագրութիւնների ևս հաստատւում է Ասողկի վկայութիւնը, թէ առաջին վանահայրը Սիմէոնն էր, որ ՆԽ = 991 թուի արձանագրութեամբ Տիրանուն երեցի հետ շինել է տաճարը Սմբատի և Գուրգէնի փրկութեան համար, որոնց բարձրաքանդակն էլ գտնւում է արևելեան պատին (պատկ. 9)։ Նոյն Սիմէոնի յիշատակութիւնն ունինք ՆԾԳ=1004 թուին եկեղեցու Ատոմ վերակացուի կանգ-

3. առաջնորդութեան. տն. Հ
4. ամաղասպա կանգնե
5. ցաք զսբ. Սարգիսս բարէ
6. խաւս մեզ եւ Մխիթար վդ.
7. Քոբայրեցո եւ հաւր Բար
8. սղի եւ ննջեցելոց մեր
9. ոց որք երկրպագէք քս.
10. ընկալ սբ. Նշանիս զմե
11. զ յաղաւթս յիշեսջ
12. իք ի տր. յիշողքս (?!) աւրհ
13. նիք ի տնէ. ի թվիս ՉԴ.

Գիրերը գեղեցիկ և կանոնաւոր։ Խաչարձանը կանգնած մեծ պատուանդանի վերայ երեք քարից բաղկացած, ներքեւի երկու քարերի բարձրութիւնը 0.36 մետր, լայնքը 1,65 մետր, երրորդ քարի բարձր. 1,28 մետր, լայնքը 1,17 մետր։ Բուն խաչարձանի բարձր. 2,47 մետր, լայնքը 0,91 մետր։ Ուրեմն խաչարձանի բարձրութիւնն է, 5,11 մետր։ Խաչը ելնդաւոր է, արմատից արմաւենիկի տերևներ վեր բարձրացած. խաչի թևերը եռատերևով վերջացած։ Ճակատաքարն առանձին, զարդարուած ելնդաւոր գծազարդերով։

(*) Շահնազ. հրատ. փարիզ. 1859. 167։
(**) Հրատ. Էջմ. եր. 100։
(***) Վարդան. Մոսկուա. 1861. 122։
(****) Ճանապարհ. ի մեծն Հայաստան. Ա. 42. և Արարատ. 1901 թ. 272. յօդ. Ա. Մինասեանի։